Հ. Ս. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՇՏԱՐԱԿ

(Բնակավայրը և պատմական հուշարձանները և վերջիններիս վիմագրությունները)

Աշտարակը Սովետական Հայաստանի՝ արագ թափով զարգացող շրջանային կենտրոններից է և միաժամանակ Հայաստանի հնագույն բնակավայրերից է։ Ուսումնասիրությունները պարզել են, որ դեռ ուրարտացիների տիրապետության շրջանում հատուկ ջրանցք է փորված եղել Քասախ գետից՝ այգիներն ու պարտեզները ոռոգելու համար։ Այդ ջրանցքը, որը սկիզբ է առնում Սաղմոսավան գյուղի մոտից, դարերի ընթացքում վերակառուցվելով, ընդարձակվելով ու ամրացվելով հասել է մինչև մեր օրերը։

Այդ ջրանցքի մի հիմնական վերանորոգման մասին նշվում է նաև Կարմրավոր եկեղեցու վրա փորագրված մի արձանագրության մեջ, որը մեջ ենք բերելու սույնի համապատասխան տեղում։

Շինարարական աշխատանքների ժամանակ պատահաբար հայտնաբերված նյութական մշակույթի զանազան մնացորդները, ինչպես և տեղում պահպանված վաղքրիստոնեական շրջանին պատկանող տաճարներն ու վաղավատական ժամանակաշրջանին վերաբերող այլ հուշարձանները նույնպես ընդգծում են նրա հնագույն ե խոշոր բնակավայր լինելու հանդամանքը։

Սակայն, չնայած Աշտարակի այդքան հնագույն բնակավայր լինելու հանդամանքին, պատմական աղբյուրները շատ սահմանափակ տեղեկություններ են պարունակում նրա մասին. իսկ ամենահին տեղեկությունը վերաբերում է միայն Ժ դարին։ Ստեփանոս Տարոնացի պատմիչը շարադրելով Հայոց իշխանների և կաթողիկոսների հաջորդականությունը, տեղեկացնում է, որ Սողոմոն Գառնեցուց հետո հայոց կաթողիկոս է դառնում տեր Գևորգը, որն Արագածոտն գավառի Աշտարակ գյուղից էր.— «Եւ ապա Տէր Գէորգ յԱրագածոտոյ, իգեղջէ Աշտարակաց՝ ամս 3»[1]։

Դրանից հետո, մինչև ԺԵ դարի կեսերը, շուրջ 500 տարի, պատմական աղբյուրներում ոչ մի հիշատակություն չկա Աշտարակի մասին. թե ինչ վիճակում է եղել նա արաբական, սելջուկյան, մոնղոլական, մանավանդ թուրք-պարսկական արշավանքների ժամանակ, ոչինչ հայտնի չէ։ Այդ ժամանակաշրջանի համար, թերևս որոշ չափով կարող են աղբյուր հանդիսանալ այնտեղ կառուցված զանազան հուշարձանները՝ իրենց վրա փորագրված արձանագրություններով, որոնց մասին խոսք կլինի համապատասխան տեղում։

---

[1] Տիեզերական պատմություն—Ստեփաննոսի վարդապետի Տարոնեցւոյ. Փարիզ, 1893 թ., էջ 107։

1464 թվականին Եղվարդի վանքում գրված մի ձեռագիր մաշտոցի հիշատակարանում ասվում է, որ Եղվարդի վանքի առաջնորդ Մանվել արքեպիսկոպոսը Աշտարակում ունեցած իր սեփական այգին նվիրում է Եղվարդի վանքին[2]։

Աշտարակի մասին հետաքրքիր և ուշագրավ տեղեկություններ է պարունակում 1478 թվականին Բջնու վանքում գրված մի ձեռագիր ավետարանի հիշատակարանը. անհրաժեշտ ենք համարում մեջ բերել նրա համապատասխան մասը.

«Եւ արդ, ես՝ Պատրոնս և ամուսին իմ Մելիք-խաթուն ստացաք զսուրբ Աւետարանս ի յարդար վաստակոց մերոց, և տուաք զսա ընծայ ի դուռն սուրբ ամենափրկչին Աշտարակու և սուրբ Մարիանին, և սուրբ Կարմրաւորին, ի վայելումն մանկանց սոցա...։

Եւ մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսուրբ Աւետարանս ի յԱշտարակու ի դրան սուրբ Ամենափրկչին և սուրբ վանորէացս՝ ծախելով և կամ խորհրդով, եթէ ոք յանդգնէ՝ մեր մեղացն պարտական լիցի յաւուրն դատաստանի։

Եւ ես Գրիգոր եպիսկոպոս Աշտարակեցի՝ նստելով եպիսկոպոս իմ սուրբ աթոռս (Բջնի) ԺԷ. (17) ամի և Զ. (6) ամիս, դրեցի զսուրբ Աւետարանս ի դուռն աթոռոյ Աստուածածնիս. որք կարդայք աստուած ողորմի ասէք մեղուցեալ հոգոյ իմոյ...»։

Հաջորդ տեղեկությունը Աշտարակի մասին վերաբերում է ԺԷ դարի սկզբներին։ Գրիգոր Դարանաղեցի ժամանակագիրը տեղեկացնում է, որ 1605 թվականին, ինքը, որ այդ ժամանակ բնակվում էր Սաղմոսավանքում, մի մեծ խումբ հոգևորականների և աշխարհականների հետ գնում են Էջմիածին՝ մասնակցելու սուրբ մեռոնի օրհնության տոնահանդեսին։ Դրանց թվում Դարանաղեցին հիշատակում է Սաղմոսավանքի առաջնորդ Սարգիս Եպիսկոպոսին, տեղի տաճիկ իշխանավորին, ինչպես և «... ալևոր վարդապետ մի Կիրակոս, զոր մականուն Պլուզն կոչէին, որ բնակէր ի վանսն Աշտարակ գեղջին»[4]։

Անցյալ դարում Աշտարակ են այցելել Եվրոպացի մի քանի ճանապարհորդներ, որոնց թվում անգլիացի Ջեյմս Մորիեն՝ 1813 թվականի հունիսի 16-ին, Գերմանացի հոչակավոր բժիշկ-բուսաբան Կոխը՝ թոքախտի հարուցիչի հայտնաբերողը՝ 1837 թվականի ապրիլի 18-ին։ Վերջինս մեկ օր գիշերել է Աշտարակում և մեծ հիացմունքով է նկարագրել նրա բնական գեղեցիկ դիրքը։

Այդ նույն դարում Աշտարակը բազմիցս հիշատակվում է Հայոց կաթողիկոս, քաղաքական ու հասարակական նշանավոր գործիչ Ներսես Աշտարակեցու կապակցությամբ։

Միջին դարերում Աշտարակի վրայով էր անցնում միջաղդային տարանցիկ առևտրի գլխավոր ճանապարհների՝ Հայաստանի սահմաններով անցնող ուղեգծերից մեկը։ Ճանապարհի այդ ուղեգիծը դուրս գալով Հայաստանի մայրաքաղաք Դվինից, անցել է Երևանի, Աշտարակի, Ապարանի (հնում Քասախ) և Անիի վրայով ու դնացել դեպի Արևմուտք։ Դեռ մինչև այսօր էլ պահպանվել են այդ ուղեգծի վրա կառուցված երեք իշեվանների (քարավանատներ) ավերակների մնացորդները։ Դրանցից երկուսը գտնվում են այժմյան Ապարանի շրջանի Արաի (Բաղարջուղ) և Ջանգի գյուղերի մոտ, իսկ երրորդը՝ Անիի շրջանի Ներքին Ջրարփի դյուղում։

Աշտարակը հարուստ է նաև պատմական շատ հետաքրքիր հուշարձաններով։ Անցյալ դարի հայ տեղագիրները յոթ եկեղեցիներ են նշում Աշտարակում։ Այդ եկեղեցիներից ոմանք, ինչպես այդ որոշակի կերպով հասկացվում է Բջնու վանքում 1478 թվականին գրված ավետարանի հիշատակարանում նշված «Եւ մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսուրբ Աւետարանս ի յԱշտարակու ի դրան սուրբ Ամենափրկչին և սուրբ վանորէացս» խոսքերից և Գրիգոր Դարանաղեցու այն տեղեկությունից, թե Կիրակոս՝ մականվամբ Պլուզ վարդապետը «բնակէր ի վանսն Աշտարակ գեղջին»՝ բացի գյուղական սովորական եկեղեցիներ լինելուց, հանդիսացել են նաև որպես մենաստաններ։ Այդ բանը որոշակի կերպով պարզ է Մարիանե կոչվող եկեղեցու նկատմամբ, որը հաստատվում է նաև նրա վրա փորագրված ստորև մեջբերվող բազմաթիվ արձանագրություններով։ Ահա այդ յոթ եկեղեցիները.

1. Միրանավոր.— Սա վաղքրիստոնեական շրջանի բնորոշ և առանձնահատուկ եռանավ բազիլիկ տիպի կառուցվածքներից է (նկ. 1)։ Նրա կառուցման ժամանակի և ճարտարապետական ձևերի մասին ճարտարապետ Թ. Թորամանյանը հետևյալն է գրում.

«Քրիստոնեական շրջանին այստեղ (Աշտարակում Հ. Ե.) գոյություն ունեցող Միրանավոր անվանված եկեղեցին, կանգնված է

[2] Հ. Ղևոնդ Ալիշան—Այրարատ—Վենետիկ 1890 թ., էջ 198։

[3] Լ. Ս. Խաչիկյան.—ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ, Երևան 1955 թ., էջ 426։

[4] Գրիգոր Վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ—ժամանակագրություն. Երուսաղեմ, 1915 թ., էջ 51—52։



Աշտարակ.—Ծիրանավոր եկեղեցին՝ հարավ-արևմուտքից։

5-րդ դարում, չափազանց հատուկ կերպով բովանդակում է իր մեջ այն ժամանակվա կրոնական պահանջների հատկանիշները թե՛ հատակագծի և թե՛ ընդհանուր շինության մեջ»[5]։

Ծիրանավոր կոչվող եկեղեցու սկզբնական շենքը ամբողջությամբ չի պահպանվել և հասել մինչև մեր ժամանակները. նա ավերվել և նորից վերակառուցվել է, ուր մի շարք փոփոխություններ է տեղի ունեցել նրա սկզբնական կառուցման ձևի մեջ, ըստ որի տեղափոխված են ներսի մույթերը և կիսամույթերը։ Հին շենքից պահպանվել է հարավ-արևմտյան անկյան մասը՝ մեկ մույթով և արևելյան աբսիդը։

Այդ պահպանված մասերը որոշակի կերպով ցույց են տալիս, որ դա եռանավ բազիլիկ տիպի մի կառուցվածք է. ներսում տեղադրված են եղել երկու շարք երեքական մույթեր և դրանց դեմ-հանդիման, կողերի պատերին կից ձգվող կիսամույթեր, որոնք միանալով կամարներով, գոտկելիս են եղել առանձին նավերի թաղակապ ծածկը։

Արևելյան ծայրում մշակված է կիսակլոր աբսիդը՝ բեմով և կից խորաններով. վերջիններս ունեն ուղիղ քառանկյունի հատակագիծ և թաղակապ ծածկ և, որոնց մուտքերը բացվում են դեպի արևմուտք՝ եկեղեցու մեջ։

Միակ վերակառուցված փոքրիկ մուտքը հարավային կողմից է, որի հին ճակատակալ քարը՝ հավասարաթև խաչի քանդակով, ընկած է եկեղեցու ներսում՝ մուտքի արևմտյան կողմում։ Երեք երկար ու նեղ, կամարակապ լուսամուտներից մեկը բացվում է հարավային պատից, իսկ մյուս երկուսը՝ արևելյան և արևմտյան պատերից՝ կենտրոնական նավի առանցքի վրա։ Ներսից սվաղած է եղել կրաշաղախով, որն ամբողջապես թափված է. աբսիդի կոնխի և հյուսիսային խորանի մուտքի վերևում պահպանված սվաղի մնացորդների վրա նկատվում է որմնանկարների հետքեր։

Ավելի ուշ, այդ վերակառուցված շենքի արևմտյան, հարավային և հյուսիսային պատերին կից, արտաքուստ կառուցված են ամուր կրկնապատեր, վերածելով եկեղեցին մի

---

5 Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատոր առաջին, Երևան, 1942 թ., էջ 289։

ամուր պաշտպանական վայրի։ Արևելյան կողմից՝ եկեղեցու պատը հենած լինելով Քասախի ձորի բարձր ու անմատչելի քարափի անմիջապես եզրին, կրկնապատի կառուցման անհրաժեշտություն, գուցե և հնարավորություն չի եղել։

Այդ կրկնապատերը ձգվում են եկեղեցու տանիքից շատ ավելի վեր, կազմելով՝ շենքի ամբողջ երկարությամբ նույնաձև երեք նավեր՝ ընդարձակ սրահների ձևով, բաժանված միջնորմերով, ըստ որի՝ թևերի կամ կողերի նավերի ուղղությամբ երկհարկ, իսկ կենտրոնական նավի ուղղությամբ միահարկ։ Այդ վերջին հանգամանքը վկայում է, որ եկեղեցու սկզբնական շենքը ունեցել է երկթեք տանիք։

Թե երբ է ավերվել եկեղեցին և երբ են տեղի ունեցել այդ վերակառուցումները, ստույգ հայտնի չէ։ Հարավային կողմի կրկնապատի մեջ օգտագործված է մի գերեզմանաքար, որն ունի հետևյալ տապանագրությունը.— «Թվ. ՌՃՄ. այս է ճանգիստ Ղարախանին»։ Այս հանգամանքը ինքնին մի ապացույց է, որ հուշարձանի այդ վերջին վերակառուցումը, այսինքն՝ այն ամուր պաշտպանական վայրի վերածումը պետք է տեղի ունեցած լինի ՌՃՄ (1701) թվականից հետո։

Եկեղեցին վերջին անգամ ավերվում է 1815 թվականին, ուր քանդված է հիմնական ծածկը, դրա վրա կառուցված սրահաձև տարածությունները և կրկնապատերի վերին մասերը։ Եկեղեցու հիմնական շենքի ներսի երեսապատը սև տուֆի տաշված քարերից է. արտաքին կրկնապատերի ստորին մասերը շարված են կիսատաշ որձաքարերով, իսկ վերի մասերը՝ սև ու կարմիր տուֆի կիսատաշ քարերով՝ կրաշաղախով։

2. Կարմրավոր.— Շատ սակավաթիվ են հայ արվեստի այն կոթողները, որոնք ակնառու կերպով պահպանել են իրենց հին ձևերը՝ թե՛ ճարտարապետական և թե՛ կառուցողական առումով։ Այդ իսկ տեսակետից Կարմրավոր կոչվող եկեղեցու շենքը եզակի երևույթ է, ուստի և արժանի ուշադրության (նկ. 2)։

Սա է դարին խիստ բնորոշ ու առանձնահատուկ կենտրոնագմբեթ մի գեղեցիկ ու հետաքրքիր կառուցվածք է, որն ունի խաչաձև հատակագիծ՝ ուղղանկյուն խաչթևերով։ Խաչթևերի միացման անկյուններից ձգվող գլանաձև կիսասյուները միանալով կամարներով իրենց վրա են կրում՝ ութակող, ցածրադիր թմբուկ և բութ վեղար ունեցող գմբեթը, որը հիմքին փոխանցվում է տրոմպների

Աշտարակ.—Կարմրավոր եկեղեցին հարավարևելքից՝ մինչև վերանորոգումն ու բարեկարգումը։

միջոցով։ Արևելյան խաչթևում հարդարված է կիսակլոր աբսիդը՝ բեմով։

Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ այդ կողմի խաչթևի կենտրոնական մասից։ Յուրաքանչյուր խաչթևի ճակատից և դրանց համապատասխան գմբեթի թմբուկի չորս կողերից բացվում են մեկական կամարակապ փոքր լուսամուտ՝ շղթայաձև և գոտկավոր զարդաքանդակներ ունեցող պսակներով։

Պատերի քիվերը զարդարված են կողովահյուս, իսկ գմբեթի թմբուկի քիվերը՝ ջրի կաթիլանման քանդակներով։

Ամբողջ շենքն ավարտված է գորշագույն տուֆի սրբատաշ քարերով՝ կրաշաղախով։ Սալահատակված է, տանիքը պատած է սալաքարերով։ Բնորոշ է այն, որ պահպանվել է գմբեթի վեղարի և թմբուկի չորս տումբանների նախնական կղմինդրե ծածկը։

Հուշարձանի վրա փորագրված են մի քանի արձանագրություններ. առանձնապես ուշագրավ է եկեղեցու կառուցման վերաբերյալ միատող արձանագրությունը, որը գոտկաձև

շրջափակում է հուշարձանը՝ արտաքուստ։ Ստորև մեջ ենք բերում այդ արձանագրությունները՝ վերծանված ձևով։

Ա. կառուցմանը վերաբերող արձանագրությունը.

1. Ես Դաւիթ մեղաւոր, գիւղաքաղաքես յԵրեցունեայ Գրեւգորի քահանայի և Մանասեի որդիք տուաք շինել զեկեղեցիս Աստուածածինս վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և շինութեան Աշտարակի և պտղաբերութեան սահմանիդ և վասն.... անսն հոգոյս ... ...

Բ. Հարավային խաչթևի լուսամուտի ներքեվում, արտաքուստ

1. Անուամբ անմեղին Աստուծոյ և հաւր և
2. որդոյ և սուրբ հոգոյն ի զանութեան
3. Հասր բեկին, կաթողիկոսութեան Տէր
4. Հոստակեսին

Գ. Հարավային խաչթևի ճակատին ագուցած մի խաչքարի վրա

Սուրբ խաչս բարեխաւս է Տէր Վրդանէս եպիսկոպոսին.

Թվ. ՊՂԶ (1447). Յիսուս Քրիստոս։

Դ. Արևմտյան խաչթևի վրա, արտաքուստ.

Շնորհիւն Աստուծոյ ես Յակոբ երէց ըստ կարի մերոյ նորոգեցի զմեծ առուռ տեղւոյս բազում աշխատութեամբ որ խախտեալ էր հիմանց՝ յիշատակ հոգոյ իմոյ և որք աւդնական եղեն տրաւք. և աւանդ գրեցի որ շինած տուն եկեալ տնանդաց աւթևան լինի՝ որ ի դրաց սորին .. և ի տարին տասն աւր յորոյ անուն ի տաւն Քառասնիցն։ Ով խափանէ դատի յԱստուծոյ. կատարիշք գրոյս աւրհնին յԱստուծոյ։ Թվ. ՉԽԱ (1292)։

(Այս արձանագրությունը տեղում խիստ վնասված լինելու պատճառով մեջ ենք բերում Հ. Եպ. Շահխաթունյանից.— Ստորագրութիւն... հատոր Բ.)։

Կարմրավոր եկեղեցին շրջափակված է պարսպատերով, որոնք շարված են տարբեր մեծության անտաշ որձաքարերով՝ մի մասը կրաշաղախով և մի մասն էլ ցեխով մածուցված. հավանաբար այս վերջինը վերաբերի նրա վերանորոգմանը։ Պարսպի փոքրիկ մուտքը հարավային կողմից է, որի կիսակլոր ճակատակալ քարի վրա փորագրված է պարսպի կառուցման վերաբերյալ արձանագրությունը՝ հետևյալ ձևով.

Ե. 1. Կամաւ ամենակալին

2. Աստուծոյ և ողորմութեամբ պարոն Աղբու-
3. դային և Սիթի խաթունին ես Ասնաւորս և
4. (Ղ)ուտալշաքս միաբանեցաք սուրբ Աստուածածնիս և շ-
5. ինեցաք զպարիսպս ղշրջայաղն և զգուրն՝ յիշ-
6. ատակ մեզ և զավակի մեր Զաքարի և տվի տարենն։ Ժ։ Փասգեթար-
7. ոյ այգոյն. ով որ զայգին ուտի Բաժակ տա. և սպասաւորք սրբոցս
8. խոստացան տարին ։Բ։ աւր պատարագ՝ ։Ա։ Ասնաւորին, ։Ա։ Ղուտալշաքին՝ ի տաւնի աստուածա-
9. ծնի կատարեն. թը. ։ՉԳ։ (1254)։

Կարմրավորի շուրջը, պարսպից ներս տարածվում է փոքրիկ գերեզմանատուն, ուր ուշադրության արժանի են այնտեղ գտնվող չորս մահարձանները։

Դրանցից մեկը գտնվում է եկեղեցու հարավային կողմում. բաղկացած է պատվանդանից ու խաչքարից՝ մշակված սև տուֆ քարից։ Պատվանդանը երկու կարգից է, ստորին կարգը զանգվածային ձևով շարված է՝ քարերը սրբատաշ, կրաշաղախով միաձուլված. վերի կարգը մի ամբողջական մեծ քարից է և ծառայել է խաչքարին որպես հիմք։ Խաչքարը շքեղորեն զարդաքանդակված է և երեսի կողմից կարմրագույն ներկով ներկած։ Գրավոր հիշատակություններ չունի, պարզ չէ, թե ե՞րբ է այն կառուցված, որո՞նք են եղել նրա կառուցողները և ո՞ւմ հիշատակի համար. նրա մշակման ձևերը բնորոշ են ԺԳ դարին։

Մյուս մահարձանը գտնվում է եկեղեցու հյուսիսային կողմում. սրանից պահպանվել է միայն պատվանդանը՝ մշակված նույն սև տուֆ քարից։ Սա եռակարգ է, ստորին կարգը ցածրիկ է, միջինը բավական բարձրադիր, իսկ վերին կարգը կամ խաչքարի հիմնաքարը մի ամբողջական մեծ քարից է։

Երրորդ մահարձանը գտնվում է եկեղեցու հյուսիս-արևմտյան կողմում։ Սրա պատվանդանը երկարաձիգ է՝ շարված սև տուֆի մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախով։ Խաչքարը կարմրագույն տուֆից է, սովորականի պես գեղեցիկ քանդակազարդված, իր հիմնաքարի հետ վայր է ընկած պատվանդանի կողքին՝ ծածկված ուրիշ բեկորներով։

Չորրորդ մահարձանը գտնվում է եկեղեցուց դեպի հարավ-արևմուտք, քիչ հեռու, փողոցից դեպի եկեղեցին տանող քարե սանդուղքների վերևում։ Սրա պատվանդանը նույնպես եռակարգ է, ստորին կարգը քառակուսի ձև ունի, երկրորդը շատ բարձրադիր է, մի ամբողջական խոշոր քարից, քիվավոր, վերին կարգը կամ հիմնաքարը նույնպես մի ամբողջական քարից է։ Ստորին երկու կարգերը սև տուֆ քարերից են, շատ ողորկ ձևով մշակված, իսկ ամենավերին կարգը կարմրագույն տուֆից է։ Խաչքա-

ը նույնպես կարմրագույն տուֆից է, շատ մեծ և շքեղորեն քանդակազարդված՝ բնորոշ ԺԲ—ԺԳ դարերին։

Բացի վերը նշված մահարձաններից, Կարմրավորի շուրջը եղած գերեզմանոցում ընկած են մի քանի խաչքարեր, որոնցից ոմանք ունեն տապանագրություններ. դրանցից մեկի վրա կարդացվում է.

Զ. 1. Ի թվ. ՈԼԳ (1184) կանկնեցաւ սուրբ
2. Նշանս ի բարեխոսութիւն
3. Թադուհեաւ մաւր իմո իրկեի.
4. Որք երկրպագեք յիշեսջ-
5. իք Քրիստոս ողորմի Սարքսի կազմ (ողի)։

Է. Գեանին ընկած մի այլ խաչքարի վրա.
Սանվել և Յակոբ յաղաւթս յիշեցեք։

3. Մարիանէ.— Ջնայած արձանագրությունների մեջ ամենուր կոչվում է Մարիանէ, սակայն ավելի տարածված ու գործածական է նրա Մարինե անունը։ Միջնադարյան հայ ճարտարապետության պատմության մեջ իր կառուցողական ձևերով այնքան հետաքրքիր ու առանձնահատուկ այդ հուշարձանը պատկանում է «գմբեթավոր սրահներ» տիպի կառուցվածքների շարքին, միաժամանակ հիշեցնելով գոթական ոճով կառուցված շենքերը (նկ. 3)։

Նրա հատակագիծը, սովորականի պես, երկարավուն ուղիղ քառանկյունի է։ Արևելյան ծայրում մշակված է կիսակլոր աբսիդ՝ կից երկհարկանի խորաններով և դեպի եկեղեցու ներսը քիչ դուրս շեշտված բարձր բեմով, ուր բարձրանում են ծայրերում եղած չորս աստիճան ունեցող քարե սանդուխքներով։ Խորանները խիստ նեղ են ու երկարավուն՝ արևելքից արևմուտք երկարած, արևելյան ծայրերում ունեն վոքրիկ աբսիդներ՝ առանց բեմի։ Ստորին հարկի խորանների մուտքերը բացվում են դեպի արևմուտք՝ եկեղեցու մեջ, իսկ վերին հարկի խորանների մուտքերը՝ աբսիդի մեջ, իրար դիմաց, բեմի վրա, ուր բարձրանում են քառաստիճան քարե սանդուղքներով։

Կողերի պատերը ներսից ունեն մեկական ելուստներ, որոնց ծայրերից, ինչպես և արևելյան աբսիդի եզրերից ձգվող գլանաձև կիսասյուները միանալով կամարներով, իրենց վրա են կրում շատ նեղ բացվածք ունեցող և երկնասլաց գմբեթը՝ ութակող բարձր թմբուկով և նույնպիսի բարձր ու սրածայր վեղարով, որը հիմքին փոխանցվում է առագաստների միջոցով։

Արևմտյան անկյուններում մշակված են խորը խորշեր՝ խորանների ձևով, որոնք, ինչպես և արևելյան անկյուններում տեղադրված

Աշտարակ.—Մարինե եկեղեցին։

խորանները, շենքի հատակագիծը ներսից դարձնում են խաչաձև։

Երկու լայն մուտքերը բացվում են հարավային և արևմտյան կողմերից, ըստ որի վերջինս՝ ներկա դարի սկզբներին եկեղեցուն կից նոր եկեղեցու շենք կառուցելու հետևանքով՝ շարված փակված է։ Հարավային մուտքի ճակատակալ քարի արտաքին երեսը սվաղած է, որի վրա պահպանվել են որմնանկարների հետքեր։

Հուշարձանի յուրաքանչյուր ճակատից և գմբեթի թմբուկի յուրաքանչյուր կողից բացվում են մեկական երկար ու նեղ լուսամուտներ։ Ճակատների լուսամուտներն ունեն գլանաձև գոտուց խաչ կազմող շրջանակներ, որոնց ստորին թևերն իջնում են մինչև պատերի ստորին մասերը՝ հենվելով ցոկոլի վրա։

Խիստ բնորոշ և յուրահատուկ է գմբեթի տեղադրությունը. վերջինս հիմնված է այնպես, որ նրա թմբուկի կողերի միացման անկյունները համընկնում են շենքի ճակատների եռանկյան սուր ծայրերի հետ, մինչդեռ համահայտ է, որ գմբեթի թմբուկի չորս դլխա-

վոր կողերը սովորաբար դարձված են լինում դեպի շենքի չորս ճակատների ուղղությամբ։

Ամբողջ շենքն ավարտված է տարբեր գույնի տուֆի սրբատաշ քարերով՝ կրաշաղախով. սալահատակված է, տանիքը պատած է սալաքարերով։ Նկատելի է մի շարք վերանորոգումների հետքեր։

Մարիանե եկեղեցու կառուցումը սովորաբար վերագրում են 1281 թվականին, հիմք ընդունելով նրա հարավային ստորին խորանի մուտքի վերևում փորագրված արձանագրությունը (տե՛ս ստորև)։ Սակայն, մեր կարծիքով, այդ արձանագրությունը իր բովանդակությամբ ավելի նվիրատվական է, քան շինարարական և վերաբերում է ոչ թե եկեղեցու կառուցմանը, այլ նրա հետագա շենությանը, մանավանդ, որ նա, բացի սոսկ եկեղեցի լինելուց, միաժամանակ հանդիսացել է նաև որպես մենաստան։

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ կառուցողական արձանագրությունները փորագրվում էին շենքի աչքի ընկնող տեղերում, հատկապես արտաքուստ։ Ուստի անկասկած է, որ այն պետք է կառուցված լինի 1281 թվականից ավելի վաղ, բայց այդ նույն ԺԳ դարում։

Մարիանե եկեղեցին հարուստ է նաև վիմագիր արձանագրություններով, որոնք հետաքրքիր ու կարևոր են ոչ միայն մենաստանի անցյալ պատմության, այլև ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերությունների տեսակետից։ Մեջ ենք բերում այդ արձանագրությունները՝ վերծանված ձևով։

Ը. Ներսում, հարավային ստորին խորանի մուտքի վերևում.

1. Յառաջնորդութեան Գրիգոր վարդապետին ի ջին-
2. ութեան սուրբ եկեղեցոյս ես Թագուհի դու-
3. ստր Սահակ իրիցո էտուղիմ հայրենի
4. տունն և զքարհանուցն այգին ի սուրբ Մարիան-
5. էս. և խոստացան ի տարին ։Գ։ պատարագ ինձ առ-
6. նեն ի նոր կիրակէին՝ անխափան. ի թվի ՉԼ (1281)։

Թ. Նույն տեղ, նախորդից ներքև.

1. Ես Յակոբ որդի Ասլանկան էտու զիմ այգո
2. յն կեսն և զվահանայ Դավթին հողն ի սուրբ
3. Մարիանէս. և խոստացան ի տարին ։Գ։ պատ-
4. արագ ինձ ի տանի սուրբ Յակոբին կատարեն՝
5. անխափան։

Ժ. Դարձյալ ներսում, հարավային պատի վրա.

1. Կամաւն ամենակալին Աստուծոյ ես Ասնաւորս և ամուսին իմ Ղուտալլ-
2. աք և զաւակ մեր Զաքարէ միաբանեցաք սուրբ Մարիանէիս և գնեցի
3. զՔարգործենց հողն ի հալալ ընչից մերոց որ ի Տեառնընն-
4. չոր առվին ներքեւն. և սպասաւորք սրբոցս խոստացան ի տարին ։Բ։ աւր պատ-
5. արագս Ասնաւորին և Ղուտալլաքին ի տանի սուրբ Խաչին կատարեն՝ անխափան. ի թվ. ՉՀԵ (1326)։

ԺԱ. Նույն տեղ, նախորդից ներքև՝ շարունակաբար.

1. Յուսով անմահին Աստուծոյ ես Հացոս միաբանեցա սուրբ ուխտիս և տ.լի արդիւնս .
2. Եւ սպասաւորք սրբոցս խոստացան ի տարին ։Բ։ աւր պատարագ Թաթա-խաթունին
3. ի տանի վարդավարին. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ ։իթվ. ՉՀէ (1328)։

ԺԲ. Նորից ներսում, հյուսիսային պատին, լուսամուտից ներքև.

1. Յիշխանութեան և ի տերութեան պարոն Խութ-
2. լուրուղային, ես Աւետիս որդի Ուսամին ետու
3. յիմում ձեռնուորութեան զվարի առվին ձեռնաւորա
4. ջուրն ի սուրբ Մարիանէս, եթէ ոք խափանել ջանա, դատի
5. յԱստուծոյ։ ի թվ. ։ՉԼԴ։ (1285)։

ԺԳ. Նույն տեղ, հյուսիսային ստորին խորանի մուտքի վերևում.

1.2. ի թվ. ՉԿԱ (1312)
3. Յոսովն Աստուծոյ ես Դանէլս
4. ետու զիմ հալալ դրամագին էգ-
5. ին ի սուրբ Մարիանէս և սպասաւորք
6. սրբոց խոստացան։ Եւ աւր ժամ
7. ի տարին յԱստուծոյ Տեառընդառաջի աւրացն անեն՝
8. ։Ա։ Գորգայ, ։Ա։ Մարեմա, ։Ա։ ինձ,
9. ։Ա։ Թախտաւորին, ։Ա։ Էլխաթունին. կատար-
10. իչք գրոյս աւրհնին յԱստուծոյ և խափ-
11. անողքն ։ՅԺԸ։ իցն նզոված է և տէր է մեղացս
12. տէր է իսպառ... տս։

ԺԴ. Արտաքուստ, հարավային պատի վրա, մուտքից արևելք.

1. Ի թվ. ՉՀ (1321) .
2. Կամաւ ամենակալին Աստուծոյ ես տիկնաց տիկին՝ ամուսին Արջ-

3. ուկին միաբանեցա սուրբ Մարիանէիս և ետու զՎարաս-
4. անց այգոյն կեսն և ։Յ։ դահեկան. սաղ գնեցի և տվի. և սպաս-
5. սուրբ սրբոցս խոստացան ի տարին ։Բ։ պատարագ ի տանին Ղա-
6. զարու. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ՝ ամեն։

ԺԵ. Նույն տեղ, մուտքի շրջանակին կից՝ արևմտյան կողմից.

1. (Կամ)ան Աստուծոյ ես Թուխան և ամուսին իմ Մա-
2. մեկին միաբանեցաք սուրբ Մարիանէիս և տվաք զմեր հալալ
3. [դրամ]ագին հողն և զմեր շինած տունն ի սուրբ եկեղեցիս.
4. սպասաւորքս հաստատեցին ի տարին ։Ռ։ պատարագ՝ ։զԱ։ Թու-
5. խանին, ։զԱ։ Մամեկին, ։զԱ։ Ամլորիկնայ՝ անխափան։

ԺԶ. Նույն տեղ, արևելյան կողմից.

1. Կամաւ ամենակալին Աստուծոյ և ողորմութեամբ պարոն Աղբ-
2. ուղային և Սիթի խաթունին ես Յակոբ էրէց ի վանքս
3. շինեցի հոյրայտուն, ։Գ։ դուռն պարսպին, դռանն էլ տն-
4. եր շինեցի և զամէն դամէն հոյրայտանն տվի. ով որ հանգչի
5. դիդէունքն ի հոյրայտանս նրան և պարոնայքն
6. զայն տներոյն զամէն հրկ թողին ոչ բարաթ ոչ
7. առմունք զամիրայ ոչ ձեռնաւոր ոչ գզիր ոչ
8. ....շ.. ոչ ով հետի էն տաներոյն բան չունի ոչ
9. վանացս հայր. փոքր աւեր խուպան կայր հոյրատ-
10. ան համար՝ շինեցի. եթէ ոք վրոյգրելոյս
11. հակառակ լինի, դատի յԱստուծոյ և մեր մեղացն պարտական է
12. և վարձք զՈւտայի և զԿայենի առցէ ։ի թվ։ ՉԿԶ (1317)։

ԺԷ. Նույն հարավային պատին, մուտքի արևմտյան կողմում.

1. Շնորհիւն Աստուծոյ ես խաթունիկս և իմ որդիս Յովաննէս մի-
2. աբանեցաք սուրբ Մարիանէիս և տվաք զմեր Աշախաս-
3. ուին այգոյն կեսն և այլ արդիւնս, և սպասաւորք սուրբ ու-
4. խտիս խոստացան ի տարին ։Դ։ աւր ժամ՝ ։Ա։ խաթունկանն, ։Ա։
5. իսին, ։Ա։ Մխիթարչին՝ ի նոր կիրակէն առնեն անխափան.
6. թվ, ։ՉՀԲ։ (1323). կատարիչքն աւրհնին յԱստուծոյ։

ԺԸ. Արևելյան պատի հարավային եզրի վերևի մասում, արտաքուստ

1. Ի յոյսն ամենեցուն ի Քրիստոս ապաւինեալ ես Սիթի խաթուն՝ ամուսին Աղ-
2. պուղային ետու
3. սուրբ Մարիանէի միաբանայտուն զՓարպոյ հողին կեսն որ Այծամանց
4. երկիրն, որ զկէսն Ապաղարիփի որդին գնեալ էր ի Թուրանէն Սիորսոնէու սուրբ Մարիան-
5. էիս տվեալ, որ զ։Ա։ էլկեանս տվու այս հարկէ ազատեցի չոռն ոչ .....
6. ոչ շարիատ ոչ էլ մեծ կամ փոքր խարճ. ով զմեր հաստատ յարկս խաբնել ջանա՝
7. ի մերոց կամ յաւտարաց՝ դատի յԱստուծոյ և անէծս առցէ և մեր մեղացն պարտական է. թվ. ՉՀԲ (1323)։

ԺԹ. Նույն տեղ, նախորդի ներքևում՝ շարունակաբար.

1. Ես Յակոբ Ապաղարիփի որդիս տվի յիմ գնած Փարպոյ հողին՝ զիմ գնած խուպանն։
2. որ Աւշականոյ հանգեն, որ Պետրոս իրիցո ։Ճ։ սպիտակ։ դր.. Պետրոս զիւրս չեր տվել՝ ես զհ-
3. այրենիքն տվի Անադիսի յազգէ. և միաբանքս խոստացան ի տարին ։Բ։ աւր ժամ ի տանի համբարձմանն.
4. կատարիչք աւրհնին յԱստուծոյ՝ ամէն։

Մարիանէի վանքը շրջափակված է եղել հաստ պարսպապատերով, որի առանձին, փոքրիկ մասերն են պահպանվել։ Դրանց մի մասը շարված է խոշոր, կիսատաշ որձաքարերով՝ կրաշաղախով, իսկ մնացած մասը՝ համեմատաբար փոքր, անմշակ որձաքարերով՝ ցեխով։

Եկեղեցու հարավային պատի արտաքին երեսի վրա փորագրված մի արձանագրության մեջ ասվում է (արձանագրություն ԺԶ), որ Հակոբ երեցը Մարիանեի վանքում 1317 թվականին կառուցում է հյուրատուն, վանքի պարսպի երեք դռները և ուրիշ տներ՝ պարսպից ներս։ Դրանից միանգամայն պարզ է դառնում, որ այդ ժամանակ՝ 1317 թվականին արդեն գոյություն ուներ պարիսպը և, որ մինչև այժմ պահպանված քարուկիր շարվածքով մնացորդները հենց այդ պարսպի մասերը պետք է լինեն։ Իսկ պարսպի ցեխով շարված մասերը, անկասկած վերաբերում են նրա վերանորոգմանը, որը տեղի է ունեցել ԺԷ դարում։

(Շարունակելի)